



մասնիկ և բորբն և պատմե ինձ: Հինգ թերի վրայ առժամապատի հայրք ուր-  
ուազել է այն, ինչ եռմ օրուայ ընդուցամ կարապու պատմե ինձ:

Երկուս ծեռակի Մերկի Մատրոս նամանան է, մի ամճնառութիւն, որ  
շատ յա ժամանք է Զանցեզարի ամրոց գալաքին, որպինքան եւխու ասինք վա-  
րել է առողջի, զիւղակն զարքի, ծալիքնամի և փոտարամի պատօն: Պարագ  
պետ արքիցեց ինձ Մերկի օրդոն նամապահութիւն և իմ խնդրով զայց Ալո-  
յացուն՝ և յանձնապէս ինձ համար նաւաման մեջ Բարամանանիւն և Թարա թշու-  
մի մասին տեղեկարիմնեւ, աւելացնելով պահա վրայ իւր զամապան ժամանակնե-  
րում բաժնեց:

Երեսոյ՝ թէյ զիւլի Մերկ-Փարապահնան բար ծեռակիմեր մէջ յար ինքո-  
շուրեամբ ամբ ընկնու Զարուիքին թէին է, որ նաման նաև ալդիցի ինձ Վայս-  
նայ վանին ու Հովհանի թերը:

Զարուոյ՝ Աշտարակի զիւլի նամանան և՝ Տէր Անեսովք Տէր Ցարութիւննան,  
ոչ այսու զայց առաջ ինձ Երդիվամբ, Մերկ-Փարապահի գերեզմանի և այլն:

Հիմքեառոյ՝ Կովկ զիւլի Մենիկ Առմանեամնամբ, վեցեւոր՝ Տասօնի նա-  
մանան և, այս տա տան:

Դ վերջո այս համաւտի պարզութան թերեւ այն անցկացրին պ-  
ու. Մանուշար-թէկ Մերկ-Անեփաննան (Դանակամ) և Սպոլման-թէկ Մերկ-Փար-  
ապահնան, ուստի հնապարիսնեւր և նամանկին առանձին ժամանակիւնեւոյ:

Ցարեամ և՛ իմ իմ խոյնի ընտանկարիմնան վերաբեր բար անձնեին:

Դաս ցանկալի է, ու կուզա անձնի դիք առանձին ինձ շարատանձ առանձ-  
րիննեն է, ու պաշտի ապազային նաւառութիւն յինտ մելիններ վերաբե-  
րամք դի ադրբաջան տեսուքին նաւարակի:

Այսուհետու այս պահա զայց առաջանաւ առաջաւագան առաջաւագութիւնը  
պարզու նախարար համար առաջանաւ առաջ առաջարկուած ու ու առաջարկու-  
ապահութիւնը նորու առաջանաւ առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-  
րկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջարկուած ու ու առաջա-

(10) այս պահա զայց առաջանաւ առաջարկուած ու առաջարկուած ու առաջար-

զատկանը համարության մեջ մասնաւում ունեցած պատճենագույքը կամ չ է առաջացած կամ է առաջացած դրա մասնաւում ունեցած պատճենագույքը կամ չ է առաջացած դրա մասնաւում ունեցած պատճենագույքը:

Այս բառականական առաջարկը

## ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

առաջի ժամանակը առաջի առաջարկը առաջի առաջարկը

Այժմեան Դափանի ստորիկանական շրջանաւմ նախանցեալ դարում իշխալ են երկու նշանաւոր մելիքական սերունդներ. մինը Մ'ելիք-Փարստաղանի, միւսը Թորոս-իշխապնի: Մելիք-Փարստաղանան սերունդը բաժանուել է երկու տան՝ բաւ Մ'ելիք-Փարստաղանեան և Մ'ելիք-Ստեփանեան: Բացի օրանից Մելիք-Փարստաղանի մի գատեր սերունդը կազմել է մի ուրիշ, փոքրիկ մելիքութիւն: Մ'ելիք Նուքարեան անունավ:

Թորոս-իշխանի սերունդը համարւում է այժմեան Մելիք-Թարամեանները, որոնք ոմանց կարծիքով, սերել են Թորոս-իշխանի Մազիկ զատեր և վրացի Թարամ իշխանից, իսկ իրենց, Մելիք Թարամեանների ասելով, Թորոս իշխանի թոռ՝ Հեթումի որդի Թարամից, որ քաջ մարդ է եղել և լիզգիների դէմ վարած պատերազմերի ժամանակ ցոյց առած արտակարգ քաջութիւնների շնորհեւ: Մուստափա-փաշից Քիւփարա գաւառակի<sup>1)</sup> վրայ մելիք կարգուել:

Բացի այս երկու տանմից այսուղղ եղել է նաև մի ուրիշ մելիքական տուն, Մելիք-Փրանգիւի, որ թուրքացել է:

Մելիք Թարամեաննեանները ընակուել են գլխաւորապէս Հայունոր և Բեկի զիւղերում, Մելիք-Ստեփանեաններն Առաջաձորում, իսկ Մելիք-Նուքարեանները՝ Եփկանողում: Թորոս իշխանը՝ Եղուարաւում, Մելիք Թարամեանները՝ Ազարակում, իսկ այժմ Տանեթափա կամ Դարարարա գիւղում, Մելիք-Գրանգիւն էլ Արծուանիկում:

Այս մելիքական տանմերից ամենանշանաւորը Մելիք-Փարստաղանեանն է, որ սերել է, ոմանց ասելով, Մինեաց Զագիկ իշխանից, իսկ Բեկի ծերունիների ասելով՝ Մատիկ (Աստուածատուր) իշխանից, որ Վրաստանի կողմերից եկել վերաբնակուել

<sup>1)</sup> Քիւփար զաւառից բազիսուն է Անոքար, Դափեկ, Ըրիենեց, Արծուանիկ, Ջիշտ, Խըրանց և Շէրուկ գիւղերից:

է Ղափանում Այս տոհմի առաջին, պատմական անձնաւորութիւնը համարում է Մելիք Փարսադան Ա. որի անունով և կոչւում է այս տոհմի աւագ ճիւղը, և որի ճիւղագրութիւնը հետեւալն է:

Մելիք-Փարսադան Ա.

Մելիք-Պալի.

Մ. Փարսադան Բ.	Աստուածատուր իշխան Շահում կամ Շիկո	
Սաֆրազ և Պալի.	Դաւիթ-բէկ	Ստեփան իշխան
Ելիք-բէկ		Օհան-իւզբաշի
Մելիք-Փարսադան Գ.		Մելիք-Ղուկաս
Մելիք-Յովհաննէս		Մելիք-Յովհաննէս
Մելիք-Պալուստ		Մելիք-Ստեփան
Յովհաննէս-բէկ		Մելիք-Սողոմոն
		Տէր-Մովսէս 1)

Խաչպէս երեսում է այս ճիւղագրութիւնից՝ Մելիք Փարսադան Ա. ունեցել է մի որդին՝ Պալի, իսկ սա երեքը՝ Մելիք Փարսադան երկրորդ, Աստուածատուր իշխան, և Շահում կամ Շիկո: Մելիք Փարսադանը ունեցել է երկու ուստոր, Սաֆրազ և Պալի և մի զուտոր, որի անունը յայտնի չէ: Աստուածատուր իշխանը ունեցել է միայն մի որդի, Դաւիթ-բէկ, Դարաբազի պատութեան հերոսը, որով և վերջացել է սրա սկրանդը, որովհետո Դաւիթ-բէկը չէ ամուսնացել: Շահում կամ Շիկոն էլ ունեցել է մի որդի՝ Ստեփան-իշխանը, Դաւիթ-բէկի պատաննեկան ընկերը և յատոյ նրա զօրավարը: Սրա սկրանդը մինչև այժմ էլ շարունակում է և նրա անունով կոչւում Մելիք-Ստեփաննան:

1) Մելիք-Փարսադաննեներից ոմանը ասում են, թէ Մելիք Ստեփաննեանների նախանայր Շահումը իրենց նախանայր Մելիք-Պալու որդին չէ, այլ նկատատան գիւղի մելիքը: Գուցէ այս աւելի ճիշտ լինի, թէպէս և իրենց, Մելիք-Ստեփաննեանների ճիւղագրութիւնն այդպէս է գուրս բերուած, մանաւանդ որ Շաւիթ-բէկի պատմութեանց մէջ Ստեփան-իշխանը կոչւում է Վարդանիսեան, ի տանին Շահումնան: (Շաւիթ-բէկ. հրատ. Գուլամիրեանի. եր. 30):

Մելիք-Փարսադան Բ. իւր գուսարը կնութեան է տուել Շիկոնցցի Վարդիկի որդի Նուբարին, Վերջինս թէպէտ ծագմամբ ուսմիկ, բայց վիթխարի և ըստ երևութիւն, քաջ մարդ է եղել, ուստի և Մելիք-Փարսադան Բ. աւալով նրան իւր գուսարը՝ ստանձնել է նրան իւր երկրի հիւսիսային սահմանի պաշտպանութիւնը և նույիրել նրան Բերդաքար ու Կոնառու-բերդ ամրացնեցը, Սակայն Մելիք-Փարսադան Բ.-ի աւագ որդի Սափրազը սաստիկ բարգրել է հօր գէմ, կամնարով արզիկել, որ իւր քրոջը մի այդպիսի սամկի տայ և երգու նշանաւոր բերդեր Նուբարի ուս մի թռւլամորթի յանձնիւ եւ երբ հայրը նշանակութիւն շտալով սրա խոսքերին, յանձնել է աղջիկն ու բերդերը Նուբարին, Սափրազը կամեցել է զնչիք զօրութեամբ յիշ իւել գնենէ բերդերը, ուստի և իւր զօրքերն առաջ յարձակուել է Մելիք-Նուբարի վրայ, Մելիք Փարսադանը սաստիկ զայրացել է իւր որդու այսպիսի յանդըզնութեան վրայ և օգնական զօրք է ուղարկել Նուբարին, որ մի լու դաս տայ նրան, Սափրազը շտանելով այս անպատճեթիւնը՝ թողել հնացել է Կ. Պոլիս և այնտեղ պալատական ժառայութեան մէջ մտել 1)։

Այս անցքը չափազանց ծանր տպաւորութիւն է գործել նաև Դաւիթ բէկի վրայ, որ իւր հայր Աստուածատրի մահից յիսոյ մնացել էր Մելիք-Փարսադանի անմիջական իշխանութեան ներքոյ, Ռւստի և առ ևս թողնում հեռանում է Վրաստան և այնուեղ վրաց թագաւորի մօտ ծառայութեան մանում։

Մելիք Փարսադանը այս երկուսի հեռանալու պատճառով կանչում է մնձորեսկ գիւղից Մխիթարին և զօրքի սպարապետ կարգում։

Այսպէս անցնում են մի քանի տարի. Մելիք Փարսադանը Մխիթարի և մելիք Նուբարի հետ պահպանում է իւր երկրը, սակայն յանկարծ Զալար-եալլու թուրքերը յարձակում են մելիք Նուբարի վրայ և պաշարում կոնասու բերդը։ Մելիք Նուբարն այս անափնեալ պաշարումից յուշանառուած՝ վերցնում է իւր երեխաներին, կոսդը և գիշերով փախչում գէպի Թիֆլիս, բերդի պաշտպանութիւնը գիւղացիներին թողնելով։ Անաէր բերդը շուտով առնեւմ է և շատ կանայք չկամնալով թուրքերի ձեռքն ընկնել, բերդի զագաթից վայր են զըրում և իրենց արինով

1) Պատմում են նաև, որ Սափրազ-բէկը Կ. Պոլիսից անցել է Հնդկաստան, ուր անպին կարողութիւն գիշելով կառակել է իւր ազգականներին։

ներկում քարերը, որի պատճառով և բերդը վերակալվեմ է հարմագութար:

Այս ազետալի անցքի լուրը երբ համում է Մելիք-Փարսաղանին, սա «Ճեծում է ծնկները» ասելով. «Սաֆրազի խօսքերը ճշմարտացան, Մելիք Նուրարը, յիրաւի, բերդ պահող չէ եղել, ափամուս որ լլաեցի որդում:

Մի առ ժամանակից յետոյ, երբ Զալար-եալլուի թուրքերը թալանելով կանասու բերդի բնակիչներին հեռանաւմ են, Մելիք Նուրի լուրարը վերագումնում է իւր երկիրը և սկսում է աւել բերդը նորից շինել, շինոցնելու Սակայն թուրքերի նետ ընդհարումը դարձեալ շարունակւում է. թուրքերը ամենաշնչին պատճառով անգամ սպանում, կողոպտում են խաղաղասէր հայերին: Այսպէս մի օր Մելիք-Նուրարի կրտսեր եղրայր Յովհաննէս բէկը երկու ձիաւորով զնում է Սովիր զիւզը (Եփկառողի մօտ) իւր նշանածին տեսութեան: Սէխալար (այժմ Զինարըզ) թրքարնակ զիւզից անցնելիս Յովհաննէս բէկը չի բարեւում մի թուրքի. և առ առանց այլայլութեան նրա հետեւից արձակում է հրացանը և գետին զլորում:

Երկու ձիաւորները փախչում են, գալիս Շիկանող և այս մասին յայտնում Միխիթար սպարապետին, որ այդ ժամանակի իւր զօրքով այդտեղ էր գտնւում. առ իսկոյն մի հարիւր զինուոր Շահնում որդի Սահփան իշխանի առաջնորդութեամբ ուղարկում է Ռանջարու ձորը՝ զիւզի ճանապարհը կորելու, իսկ ինքը մնացած զօրքով յարձակում է Սէխալար զիւզի վրայ, մօտ երկը հարիւր տուն բնակիչներին կատորում, զիւզը կրակ տալիս և մեծ տեսրով վերացանում իւր բանակը, որ գանւում էր Պըուըրթումը զիւզի մօտ:

Պարզ է, որ Միխիթար սպարապետի այսպիսի խիստ զրեժինորութիւնը զրգում է թուրքերին, որոնք առանց այս էլ շարունակ հալածում, կոտորում, կողոպտում էին Հայերին: Այս բոլորի վրայ աւելանում է նաև այն, որ լեզգիներն սկսում են ահազին խմբերով յարձակուել Դարարազի վրայ, աւելի ու կողոպտել: Այսպահն թշնամիներին ընդդիմապերելու համար Սահփաննոս իշխանը խորհուրդ է տալիս մելիք-Փարսապանին, որ յետ կանչէ Վրաստանից Դաւիթ-բէկին: Սակայն Միխիթար սպարապետը ընդդիմանում է, ասելով. «Էլազգիները զալիս են՝ թող գան, ով սպամարդ է՝ թող անուն հանէ, Կարիք չկայ Դաւիթ-բէկին կանչելու», Մելիք-Փարսապանը ենթարկում է Միխիթար սպարապետի ազգեցութեան և չի համաձայնում կանչելու: Սահփաննոս իշխանը տեսնելով, որ Միխիթար սպարապետը հետամուտ է միայն իւր բազիի

դօրսթիւնը ցայց տալու, և նրա ողէաքը չէ, որ երկիրն աւերտում է, քանի որ չեն միարանում և ընդհանուր ուժով ընդդիմագրում թշնամունքն, բազմաթիւ կեղծ կնիքներ է շինել առլիս Աորարազի առնուուէքրների անուններով և զրանցով կնքելով մի խնդիր՝ ուղարկում է վրաց վալիին, որով խնդրում է, որ Դաւիթ բէկին ուղարկէ՝ լեզգիների յարձակման առաջն առնելու:

Այս նամակը առնում է Եղիսարէկ Մելիք-Փարսապաննեանը Եկպատու (այժմ Թիկուա) զիւղացի Շահումը հետ:

Վրաց վալին ստանալով խնդիրը՝ հարցնում է Դաւիթ-բէկին, թէ կը կամնանք արգեօք զնալ Սա ուրախութեամբ յանձն է առնում, միայն խնդրում է, որ բացի իւր վեց հայ զինուորից; Բոյլ առյ իւր հետ տանելու նաև վրացի Դէօրգի իշխանին ու 34 հայ ու վրացի զինուորների Վալին թոյլ է առլիս և Դաւիթ-բէկը Դէօրգի իշխանի հետ բաստում զինուորով զալիս է զէսի Դաւիսու Ռէշտափի մօս աւենում է որ Դարձարլու թուրքերն իրենց վրանները խփել են այս դաշտավայրում և անսատներն արածեցնում են Ծնէքը և Խոսի արտերում: Երեկոյեան գէմ Դաւիթ-բէկը իւր քառասում զինուորներով յարձակուում է սրանց վրայ, շատերին կտարում, և բոլոր աւարն առնում տանում Ծնէքը զիւղը: Այս յազթութեան լուրն իսկոյն տարածում է շրջակայքում և Ստեփանոս իշխանը Պըսըւաթումբում լսելով այս մասին՝ առաջարկում է Միխիթար սովորապեսին զնալ միանալ Դաւիթ-բէկի հետ Բայց սա չի համաձայնում, տաելով, թէ առանց Մելիք-Փարսապանի խորհրդի այդպիսի քայլ չի կարող անել: Հետեւեալ օրը Միխիթար սովորապեսը ուզնուուրում է Հալլիճոր՝ խորհրդակացելու Մելիք-Փարսապանի հետ, իսկ Ստեփանոս իշխանը 700 զինուոր-ներից չորս հարբերին իւր հետ տառ գալիս է Դաւիթ-բէկի մօս:

Սա շաս սիրազ ընդունում է նրան, որպէս իւր պատանեկութեան ընկերի, որի հետ միասին առլորել էին Տաթեսի վանքում: Եւ երբ Ստեփանոսը յայտնում է, թէ ինքն է կանչել նրան, տանուուէքրների կեղծ կնիքներ շինել տալով, Դէօրգի իշխանը սաստիկ նեղանում է, թէ ինչի այդպիսի կեղծիք է զարծել, իսկ Դաւիթ-բէկը հանգարատացնում է, թէ ի՞նչ անենք, արդէն կատարուած է, գուցէ բարին այս էր:

Մի քանի օր յետոյ թուրքաց Զիվանշիր կոտուած ցեղն ահազին բազմութեամբ զալիս է Դաւիթ-բէկի վրայ: Սա մօս հինգ հարիւր զինուորներով յարձակուում է նրանց վրայ և ստատիկ կոտորելով յազթում ու ահազին աւար առած կրկին իշխան Ծնէքը:

Դաւիթ-բէկի յազթութիւնից բախալերուած Տաթես զիւղի բնակիչները զալիս են սրա մօս և զանգատուում իրենց մելիքի

դէմ, առելով որ նա սկզբներում շատ նեղել է իրենց և երր իրենք ապստամբել են նրանից, նա փախել է Թավրիզ, ուր ընդունել է մահմեդական կրօնը, իւր Դաւիթ անունը փոխել Բաղրի, և զերահաստատուելով մելքյական կոչման մէջ, վերագրածել է և այժմ իրենց այն աստիճան նեղում է, որ պատրաստ են զատելու իրենց աները և կննդանի այրուելու:

Անմիջապէս Դաւիթ բէկը զօրք է ուղարկում Տաթե և ու Հարդում է Բաղր-բէկի սակաւաթիւ զօրքը, նրան գերի է բռնում ու բերում Ծնէւր՝ բէկի մօտ: Դաւիթ-բէկը նրան երեք որ ժամանակ է տալիս, որ ապաշխարէ և ապա Ծնէւրի անապատի դան առջն կախել է տալիս: Անապին բազմութիւնը շրջապատելով այդ ուրացողին շարունակ բղաւում է.

Լուսը լուսաւորչի հաւատին, վմյ ուրացող մարդին:

Այս գէպքից յետոյ Ծնէւր, Խոտ, Խայիճի, Սումարանց, Տանձատափ և Տաթե գիւղերն ենթարկում են Դաւիթ-բէկին:

Սակայն այսքան գիւղերի հպատակութիւնը բաւական չհամարելով Դաւիթ-բէկը մարդիկ է ուղարկում Մելիք-Փարսադանի և Միսիթար սպարապետի մօտ և խնդրում է, որ գան իրեն հնամիանան, ընդհանուր թշնամուն երկրից գուրս համելու համար: Բայց Մելիք-Փարսադանը պատասխանում է, թէ ես ինչչ պիտի գամ իմ եղբօր որդու մօտ քանի որ երկիրն էլ, զօրքն էլ իմն են: Դաւիթ-բէկը լսելով այս պատասխանը՝ անմիջապէս հաւաքում է եռոտի և Ծնէւրի բնակիչներից հարիւր յիսուն հոգի, և պատուիրում, որ մի պատրուակով զնան Հայկաց և Մելիք-Փարսադանին ու Միսիթար սպարապետին բռնեն, բերեն իւր մօտ: Մրանք զնում են և ձևացնելով իրը թէ դանգաւում են Դաւիթ-բէկից, բռնում են Մելիք-Փարսադանին, նրա փեսայ Ցը Աւետիքին, ու Միսիթար սպարապետին և բերում Տաթեի վանքը: Այստեղ է զայիս նաև Դաւիթ-բէկը, որ սրանց վրայ սաստիկ բարկացած լինելով՝ առանց հետները մի բառ խօսելու՝ հրամայում է բանտարկել բոլորին:

Ապա իւր զօրքերն առած անցնում է գէպի միւրայար զիւղը, որի պարսիկ բնակիչները նեղում էին Տաթեացիներին: Դաւիթ-բէկը սրից անց է կացնում սրանց մի մասին, իսկ միւս մասը զաղթեցնում է գէպի Պարսկաստան: Յետոյ իւր բոլոր ուժերն հաւաքելով զնում պաշարում է Որոսնայ բերդը:

Այս միջոցին Մելիք-Փարսադանը իւր բանտարկութեան տեղից ծածկաբար մի նամակ է գրում իւր ինամի Օհան-Խոջացուն<sup>1)</sup>, որ նուխու Վարդաշէն գիւղի իշխանն էր, և խնդրում է,

1) Օհան-խոջացու մայրը մելիք Փարսադան Բ.-ի հօրացոյն է եղէլ:

որ զայ իրեն ազատէ բանափց: Աս էլ 300 զինուորներով զայիս է Տաթեի վանքը, տեսնուում Մելիք-Փարսապանի հետ և երբ իմանուում է բանտարկութեան պատճառը, նախառուում է մելիքին, թէ ինչի՞ չի միանուում մի այդպիսի քաջ պաշտպանի հետ, ինչպիսին է Դաւիթ-բէկը: Ապա վեց զինուոր է զնուում մելիքի հետ և ուղարկուում նրան Որոտնայ վանքը, ուր այդ ժամանակ զանուում էր Դաւիթ-բէկը, համոզեցով որ հաշտուի նրա հետ և միացած ուժերով վանէ թշնամուն: Խակ ինքը, Օհան-Խւզբաշն, վանքի տաւարը աւարելով վերապանուում է Վարդաշէն:

Մելիք-Փարսապանը վեց զինուորներով շրջապատուած մըտնուում է Որոտնայ վանքը: Դաւիթ-բէկն այս անզամ էլ չի խօսուում հետը և հրամայուում է, որ տանեն մի սենեակի մէջ պահեն նրան: Նոյն գիշերը յորդ անձրեւ է զալիս և Որոտնայ բերդի պարսպի մի մասը քանզուում: Դաւիթ-բէկն այս տեղից ներս է մտնուում, սպանուում փաշին ու ջարդուում օսմանցիների զօրքը Յաղթանակով վերապանարով վանքը: Դաւիթ-բէկը մտնուում է Մելիք-Փարսապանի սենեակը և ասուում: Հօրեղբայր, տեսնում ես, որքան օգտաւէտ է մեր հաշտութիւնը. ինչի՞ աւելի շուտ չեկար. չնորհակալ եմ Օհան-Խւզբաշուց, որ թէպէտ տաւարս տարաւ, բայց ձեզ այս տեղ ուղարկեց, ձեր ուսը մեզ վրայ եկաւ և մենք յաղթեցինք:

Մելիք-Փարսապանը փաթթաթւուում է նրա վզովը, համբուրուում նրա նակատը և օրինուում: Այսպիսով հաշտութիւն է կայանուում հօրեղոր՝ և եղրօր որդու մէջ, որոնց այնունեանք միասին և համերաշին գործուում են: Անմիջապէս վերապանուում են Տաթեի վանքը և երեք օր շարունակ ուրախութեան հանդէս կատարուում Առմէն կողմից հայ զինուորներ գալիս են և մտնուում սրանց զրօշակի տակ:

Դաւիթ-բէկը աւար առած զէնքերը բաժանուում է հայ կամաւորներին և սրանցից երեք հարիւրը յանձնուում Մելիք-Փարսապանին, երեք հարիւրը Միիթար սպարապետին, երեք հարիւր էլ Տէր Աւետիքին, իսկ Ստեփանոսին թողնուում է նրա արդին ունեցած չորս հարիւր զինուորը: Ապա սրանց բոլորի հետ արշաւուում է Ֆէյվի բերդի վրայ, ուր իշխուում էր Ամլամազ-զուլի խանը և որին պատկանուում էին նաև Բաղարերդը (Բաղակու-քար) և Ղալարասին:

Միիթար սպարապետը զնուում է Գեղուայ գետի ուղղութեամբ, Ստեփան իշխանը Օխչա չայի ուղղութեամբ, Տէր Աւետիքը Ղուրչուուր կողմից, իսկ ինքը, Դաւիթ-բէկը, զնուում նատուում է Թամաքէշու եկեղեցու դռանը:

Պաշտոնուումը տեսուում է երկու օր. խանի հարիւրուում լինուում է

մի հայ կին, որ գողանում է պարսպի դարպասի, բանալին և մի հաւատարիմ հայի ձեռքով պարսպից գուրս ձգում: Այս ժամանակ Մխիթար սպարապետը յարձակում է վերին աշտարակի վրայ և այն տիրում: Հայ զինուորներն ել բաց նն անում գարզասը և ներս խուժում; սկսում կատարել պարսպիներին: Խանը ձի է նըստում և սկսում է փախչել, սակայն Տէր-Աւետիքը նկատում է նրան և յանեցից ընկնում, Շուշանքը ըստում բանում է և յան գարձնում: Ճանապարհին Աւամաս-դույլի խանը հարցնում է Տէր-Աւետիքին, թէ ուր է տանում իրեն, և երբ խմանում է, որ Դաւիթ-բէկի մօտ է տանելու, առում է: «Դնանք, Դաւիթ-բէկը ողորմած մարդ է: Ինձ չի սպանիլու: Այս որ լսում է Տէր-Աւետիքը՝ այնպիսի ուժգութեամբ խփում է առուբ խանին, որ ձախ ուսից աջ կողքն է անցնում»:

«Եմն, քչիր ձիզ, Դաւիթ-բէկը ողորմած է, հեզնում է Տէր-Աւետիքը!»

Խանը, որ հարուածի սասակութիւնից գեռ ևս ոչինչ չէր զգացել, քշում է ձին և տիսկոյն նրա կէսը թբրմալով վայր է զլորուում, ձին խրանում է և միւս կէմն վերան փախչում, քարէ քար տալիս:

Տէր-Աւետիքը վերադանում է Դաւիթ-բէկի մօտ և յայտնում նրան, որ խանին սպանել է:

— Ի՞նչի՞ կենդանի շրերի ինձ մօտ, հարցնում է Դաւիթ-բէկը: — Նրա համար որ բնաւորութիւնդ զիտէի, պատասխանում է Տէր-Աւետիքը, կըներէիր, կերթար նորից գործ կը հաւաքէր և կը գոր մեզ վրայ:

Այս ժամանակ բերգից վեց պատուաւոր թուրքեր ներկայանում են Դաւիթ-բէկին և յայտնելով հպատակութիւն՝ խնդրում են կոտորել իրենց: Դաւիթ-բէկն խիզյն ձի է նստում, զնում նույն է քերգը, և հրամայում, որ գաղարեցնեն կոտորածը: Միենայն ժամանակ խստիւ պատուիրում է թուրքերին, որ երեք օրուայ ընթացքում զաղթեն, ապա թէ ոչ բարդին ել կը կոտորեն:

Այս գառաւոր յաղթութիւնից յետոյ Դաւիթ-բէկը զնում է Մեղրի, անցնում Օրգուրադ և ապա Ագուլիս Ամէն տեղ հայերը ուրախութեամբ սրա տառին են գուրս գալիս և յայտնում իրենց հպատակութիւնը: Նոյն իսկ Ագուլիսի ընակիշները, որ երկու կուսակցութեան էին բաժանուած՝ պարսկական և տաճկական՝ դարձեալ հպատակում են Դաւիթ-բէկին: Բայց և այնպէս՝ Դաւիթ-բէկը ցանկանում է զլխատել տալ տաճկական կուսակցութեան պարագուխ Մելիք-Մուսան, սակայն Մելիք-Փարսականը մէջ-

նորդում է, թէ հայ է, մեղք է, կարելի է խրատել նրան ու միշտ կուսակից պահել։ Դաւիթ-բէկը յարգում է մելիքի ինպիրը։

Հէնց այս ժամանակներում Տաճիկ երեք փաշաներ միացեալ զօրքով գտյիտ են Դաւիթ-բէկի վրայ և վանանդ գիւղի դաշտում ճակատում։ Դաւիթ-բէկը յանկարծակի յարձակում է սրանց վերայ, երկու փաշային սպանում, իսկ երրորդին փախցնում։ Այս յաղթութեան լուրը որ հասնում է Թահմաղ շահին, առ մի հրավարակով Դաւիթ-բէկին այս կողմերի վրայ թագաւոր է հաստատում և դրամ կորեկու իրաւունք տալիս։ Դաւիթը սիրով ընդունում է շահի հրավարակը, հաստատում Հայիձորի ամրոցում, և սկսում գրամ կարել, որի մի երեսին գրոշում է Թահմաղ շահի մասնաւոր, իսկ միւսաւում՝ «Թիրիստոսի ծառայ Դաւիթ»։

Մի տարուց յետոյ միքանի փաշաներ նորից գալիս են Դաւիթի վրայ։ Սա անմիջապէս իմաց է տալիս Թահմաղ շահին և վերջնու երեք խաների հրամայում է վճալ օգնելու։ Դաւիթին Պատերազմը տեղի է ունենում զարդեալ վանանդի ընդարձակ դաշտում։ Օսմանցիների զօրքը 8000 տևելի է լինում, սակայն Դաւիթը յաղթում է սրանց և փախցնում։ Պատերազմը յաջողութեամբ վերջնական յետոյ Դաւիթ-բէկը հրամայում է բանել խաներին և սպանել, որովհետև նկատած է լինում, որ սրանք ուզում էին իրեն զաւաճանել և օսմանցիներին օգնել։ Խաներից երկուսին սպանում են, սակայն երրորդը փախչում է Պարակաստան։ Դաւիթը գրում է Թահմաղ շահին այս խաների զաւաճանութեան մասին և յայտնում, որ ինքը երկուսւն սպանել է տուել, իսկ մէկը փախել է։ Շահն այդ իմանալով, անմիջապէս բռնել է առլիս փախչող խանին և հրամայում գլխատելու։

Դաւիթը վերադասնում է Հայիձոր, և մի առ ժամանակ պատրաստութիւն տեսնելուց յետոյ յարձակուում է Նախիջեանի խանի վրայ, որովհետև վերջնու իմաց չէր տուել իրեն օսմանցիների արշաւանքի մասին և թոյլ էր տուել նրանց անցնելու իւր երկրով։ Պատերազմը բաւական երկար է տուեմ և Հայերից բաւականաշափ մարդիկ կոտորւում են։ Դաւիթին ստիպուած է լինում յետ քաշուել, նորից պատրաստուելու, սակայն երբ կամենում է վերամուրուզիկ պատերազմը, միքանի մարդիկ միշնորդում են և հաշտեցնում նրան խանի հետ այս պայմանով, որ Ապրակունիսի և Կարապետ վանքից արևմուտք ընկնող երկիրն ենթարկուի խանին, իսկ արևելեան կողմը տարածուողը՝ Դաւիթին, Ապրակունիսի սեռը ձգւում է գէպի նորաշնի զիսի Սմբատարերդը և այնտեղից բարձրանում Նախիջեանի հիւսիսային կողմի սարը, այնպէս որ Դարալազեապն ընկնում էր Դաւիթին Այսաեղից սահ-

մանն անցնում էր մինչև Նարաղշաղի հիւսիսային կողմը բարձրացող լեռուց, անցնում Սազսաղանի ուրը և Դիզափայտը:

Երբ Դաւթին հարցրել են, թէ ինչի՞ Նարարաղին էլ չի տիրում, ասել է, թէ ինչ կարիք կայ, չը որ նա հայ մելքների իշխանութեան ներքոյ է գտնուում:

Այսպէս Դաւթիթը մաքրելով երկիրն օսմանցիներից և մասամբ պարսիկներից՝ սկսում է խաղաղութեամբ կառավարել, սակայն այս խաղաղութիւնն երկար չի տնում, որովհետեւ Դաւթի վերադարձի վեցերորդ տարին օսմանցիների մի ահազին բանակ միացած Նախիջևանի խանի գորգերի հետ գալիս են Դաւթի վրայ: Այս ահազին բանակին, որ 200,000 զինուորներից աւելի է եղել, միացած է լինում նաև մի ահազին խաժամուժ՝ աւարառութիւնից օգտուելու յուսով: Երբ այս ահազին բանակը համառ է Աւգուրչայի մօտ, Դաւթիթը նոր է իմանում այդ մասին և անմիջապէս խորհուրդ է կազմում: Խորհրդի ժամանակ Տէր Աւետիքն այն միացն է յայտնում, թէ եթէ նոյն իսկ խոնարհումն ու հպատակութիւն յայտնելով հաշուութիւն ինգրեն, գարձեալ օսմանցիք գալու կոտորելու ու աւերելու են, ուստի լաւ է կոտել, կամ յաղթել և կամ պատուով մեռնել: Բոլորը համաձայնում են նրա հետ Առաւտան վաղ Տէր Աւետիքը պատարագ է մատուցանում, բոլոր զինուորներին հաղորդում: Իսկ կոյսերն անընդհատ ազօթում են և եկեղեցու զանգակները շարունակ խփելով Աստծուց օգնութիւն հայցում: Ապա միքանի կորիճներ գնում են և Հային ձորի առաջ, Աւգուրչայի վրայ ձգուած կամուրջը քանզաւմ, որպէսզի թշնամիները չկարողանան անցնել: Սակայն օսմանցիների բանակի մէջ եղող Նախիջևանցի հայերը գտնում են գետից անցնելու ծանծաղ տեղ ու ցոյց տալիս զօրքին, որ անցնում է և պաշարում բերդը:

Օսմանցիների զօրքը երեք մասի բաժանուած, բարձաներով աշխատում էր քանդել բերդի ամուր պարիսպները, իսկ հայ քաշերը, որոնք թուով միմիայն 300 էին, ներսից հրացան արձակելով վայր էին զլորում մօտեցողներին, կոտու ամենատաք ժամանակը Միիթարը գուրս է գալիս բերդի զաղոնի անցքից, յարձակում առաջին խմբի վրայ, շփոթութիւն ձգում նրա մէջ և սաստիկ կոտորած առաջ վիալով վիալոցնում, ապա յարձակում է երկրորդ խմբի վրայ: Այս ժամանակ Տէր-Աւետիքը, Ստեփան իշխանը և Մելիք-Փարսաղանը ևս իրանց 300 զինուորներով զուրս են գալիս բերդից և յարձակում օսմանցիների վրայ, շատերին կոտորում, զատերին էլ փախցնելով Օիրչի-Հայը ձգում խեղզում, Զօրքի մասցորդն ահազին խաժամուժի հետ սկսում է փախչել: Գիշերը

վրայ է համուռմ և Դաւթի զինուռբները զերադանում են Հալի-ձոր հանգստանալու։ Դաւթին ասում է Մխիթարին, թէ բաւական չէ, որ յաղթեցինք ու փախցրինք թշնամուն, պէտք է նաև հետեւ և կոտորեն, որ չզօրանան և նորից զան մեզ վրայ, Մխիթարը պատասխանում է, թէ բաւական է, յոգնած եմ։ Դու յոգնած ես, ես կերթամ, ասում է Տէր-Աւեմիքը։ Բայց երբ առաւօտեան դուրս է գալիս զնալու, տեսնում է, որ Մխիթար սպարապեան ու Սաեփան իշխանն էլ հետեւում են իրեն, չկամնալով մնակ թողնել իրեն այս վտանգալից արշաւանրում։ Սրանք զնում տեսնում են, որ օսմանցոց զօրքերը ցրուած Մեղրի գետի ափերին հանգստանում են։ Խալոյն Մխիթարի խորհրդով մի քանի տառնեակ հոգի զնում են Մեղրի, մնղրեցիների հագուստ հազնում և գալիս ճանապարհ մօտերքն սպասում։ Օսմանցիք փաքրիկ խմբերով զալիս են Մեղրի, սրանք յարձակում են նրանց վրայ ու կոտորում։ Վերջը մի քանի զինուռը կարողանում են փախչել և այդ ժամին ըուր տանել օսմանցոց զօրքին, և սա փոխանակ ժամանա, բռլորը միասին դաշիս անցնում է Մեղրու Փոքր-Թաղը։ Այս ժամանակ Տէր-Աւեմիքը Կարճուան գիւղի մօտով զալիս կորում է Ռւզուն-րանու կիրճը, իսկ մասցած հայերը Արագսի ափերով գալիս շրջապատում են օսմանցիներից շատերը կոտորում են, շատերն էլ Արագսն ընկնում խեղգում է։ Սրանց առաջնորդ փաշաներից մինը փախչում մի թփի տակ թաք է կննում։ Տէր-Աւեմիքը յարձակում է վերան ամեղով։ Ե՞թէլը քեզ պիտի պաշտպանիք ու խփում սպանում է, Սակայն պատերազմը սրանով չի աւարտում, որովհետև փաշան հաւաքում է իւր զօրքերի մնացորդը և կրկն գալիս պաշարում Հալիձորի բերդը։ Դաւթիը հրամայում է կէս զիշերին ժատակ ձիերի մի անազին երասմակ քշել զէպի օսմանցիների ձիերի կանգնած տեղը։ Մի անազին ազմուկ է բարձրանում, օսմանցիները կարծում են, թէ հայերը յարձակուել են իրենց վրայ՝ սկսում են մթութեան մէջ միմեանց կոտորել, շատերն էլ գու են զնում կատաղած ձիերի պացիներին և փաշան ստիպուած է լինում հեռանալու։

Այսուհետեւ Դաւթին սկսում է խաղաղ կերպով կառավարել իւր երկիրը, երկու տարի յետոյ նա վեց ձիաւորով շրջում է իւր երկիրը, մտնում Մեղրի, Օրդուրատ, Ագուլիս և մի քանի օր մնում ։ Թովմայի վանքում։ Այստեղ մի առաւօտ Մելիք-Փարսականը, որ Դաւթի հետ է լինում, նկատում է, որ ագուլեցի մելիք Մուռան, նաև, որի կեանքը ինքը ազատել էր բարեխօսութեամբ, դարձն է մտել և հրացանը ձեռին աշխատում է սպանել Դաւթին։ Մելիքն այս նկատելով բզաւում է, թէ Մուսի, չես ամաչում, միտդ

ՀԵ՞որ մենք կետեքդ բաշխեցինք, այդ ի՞նչ ես ուզում անել: Սակայն Մուսին, փոխանակ պատասխանելու, հրացանն արձակում է և գետին տապալում Մելիք-Փարսաղանին, ինքը անմիջապէս փախչում է Դաւիթին ընկնում է նրա հետեւց, բայց չի կարողանում գտնել. Արմենի ձորում<sup>1)</sup> տեսնում է Մուսու անազին հօան ու նախիրը, և քշել է տալիս դէպի Հայրենու: Ազա վերադառնում է Ազուլիս, և մեծ պատուով թաղում է Մելիք-Փարսաղանին Ա. Թովմայի վանքից արևմուտք, Վերին-գետի գերեզմանատում, որ մինչեւ այժմ մնում է գերեզմանաքարը, կրելով հետեւել առաջանագիրը. Այս է տապան Հայինորեցի մէլիք Փարսաղանին որ է որդի Պալատանին թվին ԾիծՀջ<sup>2)</sup>:

Այս տիտուր անցքից յիտոյ Դաւիթը վերադառնում է Հային ձոր: Կարճ ժամանակից իմացում է, որ Մուսին փախել է Վարդաշէն, Օհանն-իւղացաւ մատ, խկոյն Դաւիթի պատուէրով Ստեփան իշխանը նամակէ զրում Օհանն իւղացաւն, որ կամ սպանի այդ գաւանանին և զլուխը ուզարկի իրեն և կամ կննդանի բռնէ ու իրեն յանձնէ, թէ չէ, սպանում է Դաւիթը, այնքան զօրքով կը դամ քո վերայ, որ երկրիդ հողը ձիերիս առների տակ կերթայ, մի կարծիք, թէ ինամի լինելով կը ինայեմ: Օհանն իւղացին էլ պատասխանում է, թէ բռնեցի, ճգնացի Վարդաշէնի լճակի մէջ, Այսպիսի գախճան է տնենում այդ գաւանանը, որ, նոյն իսկ ժառանգների ասելով, չափազանց խիստ և գաժան մարդ է եղել, այսպէս որ եթէ մինը նրա տան մօտով անցնելին փոքր ինչ աղմուկ բարձրացնէր, նոյն իսկ եթէ փոքր ինչ բարձր ձայնով հագար, նա գուրս էր զալիս և սաստիկ զանակոծում դրան: Նա թողել է միայն մի աղջիկ, Անթառամ անունով, որ ամուսնացել է Ազուլիսի իշխաններից մինին Մելիք-Ազանի որդի Ստեփանի հետ, որից մնացել են ժառանգներ<sup>3)</sup>:

1) Դաւիթ է Ս. Առաւածուծին որբազյրէց մէ երկու վերս զէղէ հրտիսարէցից:

2) 1724 թւրին:

3) Մելիք-Մուսու գաւանանութեան մասին պատմում են նաև այս կերպ. Մելիք-Մուսին լսելով որ Դաւիթ-թէկի զալիս է Ազուլիսին էլ տիրելու, ապասաւանում է ո. Թովմայի զանցի պարապի մէջ՝ նրան ընդգիւմողը ելու: Դաւիթ-թէկի յանձնարարութեամբ Մելիք-Փարսաղանը բարձրանում է պարօպի վրայ և այսուղից սկսում համազել Մելիք-Մուսին՝ անձնատուր լինելու: Սակայն Մելիք-Մուսուն նրան պատասխանում է հրացանի մի զնտակով, որ վայր է զլորում Մելիքին: Այս անմնելով Դաւիթ-թէկը՝ հրամայում է իւր զօրքին իսկոյն քանդել վանքի պարիսպը և ներս մտնել: Պարիսպը քանդում են, բայց Մելիք-Մուսուն իւրայիններով

Մի այսպիսի դաւանանի տիուր յիշատակը նոյնպէս պահպանուել է գարարազի հայերի մէջ. զա՞ Մելիք-Փրանգիւն է, Թիւփարա վիճակի մնլիքը, որ իշխում էր Արծուանիկ, Չափնի, Ռիկնանց, Սևաքար գիւղերի վրայ. Սա սաստիկ վաւաշոս մարդ է եղել, և չնայելով որ հակոռուկ քրիստոնէական միտինութեան՝ արդէն երկու կիբէ առած է եղել, կուռթեան է խնդրել նաև Բարկուշատի մելիքի՝ Թորոս-իշխանի Մաղիկ անունով միտի աղջկան. Սակայն մերժումն և նոյն իսկ յանդիմանութիւն է սաացել, թէ մըթէ թուրք է, որ բազմակութեան է զիմումը.

Թորոս իշխանը զաղթած է եղել Սոգանլուից և նախ հաստառուել է Թորոսոյ-ձոր ասուած տեղում, որ գտնւում է Նմազլու զիւղի հանդէպ, և ճգնում է Խղճաննից մինչև Բարկուշատի գեար. Ապա կռաւելով Նմազլուեցի Մամատ-ազայի հետ՝ սպանել է նրան և տեղափոխուել Չաւունգուրի Խոր-ձոր կոչուած տեղը, և յետոյ այսանդից նզուարդ զիւղը, որտեղից իշխում էր Ազարակ, Խըրանց, Վժանիս, Ջէյզա և այժմ անհրաժ՝ Գեղարքունի, Ղարաբարար, Կըջըրիանոս և այլ գիւղերի վրայ.

Թորոս-իշխանը բարեկամական յարաբերութիւն ունէր Մելիք-Փարագան թ. հետ Մի օր այս վերջինս ուղարկում է Թորոս իշխանին Բարամ անունով մի վրացի իշխան, որը փախել էր վրաց թագաւորից և եկել ապաւինել իրեն. Մելիք-Փարագանը երկիւզ կրելով, թէ մի գուցէ վրաց թագաւորը լսէ թէ ինքը ապաստան է տուել նրանից փախած մի իշխանի և վրէժ լուծէ հայրածելով իւր մօտ ծառայութեան մտած Դաւիթ-բէկին (Մելիք-Փարագանի եղբօր որդուն), չի կամենում իւր մօտ պահել այս փախստական վրացուն և ուղարկում է Թորոս իշխանի մօտ. Սա դրան հարկանանի պաշտօն է առլիս և երբ վերջինս իւր հաւատարմութեամբ ու քանութեամբ սիրելի է զանումը՝ իւր միտի զուուր Մաղիկը տալիս է նրան կնութեան.

Այս պատճառով մելիք Ֆրանգիւը սաստիկ ոխակալում է, որ Թորոս իշխանը իրեն, հայ իշխանին, թողած, մի վրացի փախրստականի տուեց իւր աղջկան, ուստի և հրամայում է իւր չորս զիւղերի ընակիցներին, որ Կապէց (Քիւփարայի և Բարկուշատի սահմանը) ներքն աղջկի չառն կամ առնեն. Մինչոյն ժամանակ զրգում է Բարկուշատի Խանլըխար գիւղում նստաղ Ֆաթալի-

փակում է Ս. Թովմայի վանքում. Դաւիթ-բէկը սաստիկ բարկացած լինելով հրամայում է վանքի պատը ևս քանդել և սպանել Մելիք-Մուսուն, իսկոյն քանդում են հարաւային պատի մի մասը, բանում Մելիք-Մուսուն և զուրս հանում սպանում:

Եած. Մանուշար-բէկ Մելիք-Մուսունին

իշխանին, որ յարձակուելի Թորոս իշխանի վրայ, խոստանալով, որ ինքը սկզբում կը միանայ Թորոսի հետ, բայց յետոյ կը գաւաճանի նրան և կ'սպանի: Ֆաթալիի-խանը համաձայնում է, սակայն սրա ժողովուրդը երկիրու կրելով, որ սա կարող է յազդուել, պատրաստում է գաղթելու Պարսկաստան, որպէսզի առանձին վիճիք Թորոս իշխանի սրից:

Սակայն Ֆաթալիի-խանը կարողանում է համոզել ժողովորդին, որ գնան սպասեն Խուզափերինի կամուրջի մօտ, եթէ յաղթութիւնը ինքը տանի, այն ժամանակ կայրէ եղուարդի յարգով լի մարտզնիքը, նրանք կարող են տեսնել երկինք բարձրացող բոցերը և յետ գտանալ, իսկ եթէ պարտութիւն կրէ՝ ժամանակ կունենան մինչև Թորոս իշխանի յարձակուելը՝ սահմանն անցնելու:

Ապա Ֆաթալիի-խանը ահազին զօրքով գալիս է Թորոս-իշխանի վրայ և բանակ զնում Եղուարդից ներքե Թորոսյ-ձորում:

Մելք-Ցրանցիւլը մարդ է ուղարկում Թորոս-իշխանի մօտ և ասում թէ թէպէտ զու աղջիկը չտուիր ինձ, սակայն և այնպէս՝ ես միանում եմ քեզ հետ մեր ընդհանուր թշնամուն վանելու, որպէսզի աղջկանիցզ զրկուելուց յետոյ՝ երկրիցս էլ զրկուիմ: Թորոս իշխանը սիրով ընդունում է նրա օգնութիւնը, միայն պահանջում է, որ նա առանձին կանգնած կռուի:

Թորոսի եղբայր Փանին աստղաբաշխ լինելով, նայում է աստղերին և գուշակում, որ այդ օրը չար է, ուստի և խօրհուրդ է տալիս եղբօրը, որ գուրս չգայ պատերազմի, սպասի մի քանի օր, սպասի Թորոս-իշխանը չի լսում և գնում է:

Սկսում է մի կատաղի կռիւ: Թորոս-իշխանն իւր փեսայ մելիք Թարամի հետ յարձակում է Ֆաթալիի խանի վրայ, ասատիկ ջարդ տալիս և փախցնում, շարունակ հետևելով: Այս ժամանակ մելիքը Ֆրանգիւլը մարդ է ուղարկում Ֆաթալիի-խանի մօտ, թէ յետ գարձիր, շրջապատենք Թորոսին և կոտորենք: Խանը յետ է զառնում, և սա առաջից՝ մելիք Ֆրանգիւլը յետեից սկսում են կոտորել Թորոս իշխանի զօրքը: Թորոսը երկու կրակի մէջ ընկնելով զլուխը կորցնում է: Այս ժամանակ Ֆաթալիի խանը սրի մի հարուած է տալիս նրա բերանին, որովհետև մելիք Ֆրանգիւլը նրան ասել էր, թէ Թորոս իշխանը զրահ է հագնում, հետևապէս և՛ միայն բերանից կարելի է վիրաւորել նրան 1):

Թորոսը ձիուց վայր է գլուրում և նրա զիակի շուրջը տեղի

1) Մէ ուրիշ առնելութիւն առամ է, թէ կռուի խանունի ժամանակ Թորոսը լսում է մի ձայն, որ Թորոսը առամ էր, Թորոսին մի լինչը, Թորոսին մի խիւզը և երբ Թորոսը հնացրերը լուզ զարձելի է զուրից գեղի այդ ձայնը՝ որի մի ժանք հարուած են առել նրա զին, և յետոյ յարձակուել վիրան՝ սպանել:

է ունենում մի կատաղի, արիմանեղ կոփու Թորոսի զինուորները վրեժինդրութեան ոգով լցուած քաջաբար կռւում են, վիրաւորում Ֆաթալի-խանին ու սպանում Նրա եղբայր Ազատի-խանին. Ի վերջո վերահան գիշերը վերջ է զնում կռուին: Երկու կողմն էլ ըսկը-սում են հաւաքել վիրաւորներին ու մեռածներին այդ կռուի վայրից, որ վերակոչում է Նարգէսների-զաշտ (Նարգիզու-զամի), որովհետեւ հայ քաջերի այդտեղ թափուած արեան կտթիներից սկսում են նարգէսները ու շուշաններ ծիլ ու ծաղկել<sup>1)</sup>:

Նոյն գիշերը Ֆաթալի-խանի զինուորներից մի խումը յարձակուում է եղուարդ զիւղի վրայ և մարազները կրակ տալիս, որպէսզի Խուզափիերին կամուրջի մօս պատերազմի ելքին սպառող Ֆաթալի-խանի թուրքերը կրակի բոցերը տեսնին և սրանով իմանան վերջինիս յազմութիւնն ու վերապանան իրենց աեղերը: Միքանի զինուորներ էլ յարձակուում են Թորոս-իշխանի տան վերայ, սպանում մեծ որդուն և գերում կրասերին<sup>2)</sup>: Թշուառ հօր, Թորոս-իշխանի, մարմինը գիւղացիները բերում են եղուարդ և հկեղեցու մօտ թագուաւ:

<sup>1)</sup> Բաֆֆի. Դաւիթ-քէկ. 2. գէքը. էջ. 536.

<sup>2)</sup> Թորոս իշխանի կրասեր որդի Հեթուումն իւր ինամքի տակ է առնում Սօֆուլար գիւղացի սէյխի Մանենզը: Հեթուումը մնեանում է և սէյխի ջրաբացանն առանում: Նրան թուրքերը ինձրի ոյսինքն վարացի որդի էին կռուում, և նա կարծում էր թէ այդ անունը ասլիս են իւր քաջութեան համար, սակայն երբ մի անգամ նա մի թուրք է սպանուում, այն ժամանակ միւս թուրքերը պահանջուում են, որ դրան սպանեն, որովհետեւ նա գեաւուրի որդի լինելով համարձակուել էր թուրքի վրայ ձեռք բարձրացնել: Այս դէպքն առիթ է տալիս Հեթուումն իւր ծագմամբ հատաքրքրուելու, և իմանալով որ Թորոս իշխանի որդին է, փախչում գտիս է Ազարակ գիւղը, ուր ամսումանում է Դաստի զատեր Մարջանի հետ և նայն գիւղի ամսումտէր ընարուում: Նա ունենում է հինգ որդի, որոնցից երկորդը՝ Թարամը՝ անսովոր ուժի տէր է լինում, այնց ուստի կարողանում է երկու: Անոնց պայտը երկու կտոր անել: Անելի սարսափելի է լինում նրա ձայնը, որ տեօթ սարից այն կողմը ըստում է: Նա նաև չափազանց հմուտ որսորդ է լինում: Նրա մասին պատմում են, թէ նարիւրից աւելի մարդ և 96 հատ զայլ է սպանել: Այս զայլերից մինը յարձակուում է սրա վրայ երբ սա անպատճառ է լինում և հրացանը ձեռին չէ ունենում: Թարամը իսկոյն ձեռքը կտում է նրա երախը, բռնում լեզուն և սկսում ուրուել: մինենյն ժամանակ միւս ձեռքով հանում է դաշոյնը և խորու կողը՝ սատկեցնուում:

Քարամը Մուստաֆա-փաշի մօս ծառայութեան է մանում և իրը հետեակ զօրքի զիխաւոր զնում է Գանձակ և լեզգիների դէմ մզած կոբներում մեծ քաջութիւններ անում: Մի անգամ հանդի-

Դաւանան Ֆրանգիւլը<sup>1)</sup> դրեթէ զրկած բերում է Ֆաթալիստանին Արժուանիկ, ամէն կերպ խնամում նրան և միանգամայն դիւր գալու համար ընդունում է մահմեղականութիւն և ստիպում իւր որդիներին նոյնն անելու Աւագ որդի Ռուսաստամը հետևում է հօրը, բայց կրտսերը ոչ Մելիք Ֆրանգիւլը ասում է Ֆաթալիստանին, թէ քանի որ ես մահմեղական եմ, պէտք է, որ իմ որդին էլ մահմեղական լինի, այլապէս նոս իմ ժառանգը չի կարող համարուել: Ֆաթալիստանը ինքն էլ սկսում է համոզիլ այդ կրտսեր որդի Դաւթին, որ ընդունէ մահմեղականութիւն, և մեծ պարզենքը է խոստանում Բայց երբ վերջինս, այդ 18—19 տարեկան երիտասարդը, հաստատապէս մերժում է նրա առաջարկը, Ֆաթալիստիանը սաստիկ բարկանում է վերան և հրամայում է բանտարկել և ամնանին կերպ սախուել ուրացութեան, և եթէ նա դարձեալ յամառի՝ ձգել կրակի մէջ և կենդանի կենդանի այրել:

Խանի կանացից մինը<sup>2)</sup> Տաթեփ Ռազզու (Դաւթի) գուտոր Միրուն նանը (Մորունան), լսելով այս որշումը, իւր երիտանց մահմեղականութիւն ընդունած հայ ներքինու ձեռքով հանել է տալիս Դաւթին բանտից և 8 րիալ<sup>3)</sup> տալով նրան, ասում, թէ վաղը քեզ կրակի մէջ այբելու են, վեր կաց փախիր, ուր քրիստոնէութիւն կայ: Սա էլ թողնում փախչում է Ղարաբաղ:

Հետեւալ որը Ֆաթալիստանը իմանում է, որ Միրուն նանն է փախցրել Դաւթին, հարցնում է նրան թէ մնչ է արել: Սա էլ պատասխանում է, թէ ուղարկել է այնտեղ, ուր ուրացութեան ստիպունք չկան: Ֆաթալիստիկ բարկանութիւն էլ անդամութիւն կատարում է կարգում: Վերապանալով իւր վիճակը՝ մելիք Թարամը երկար պատերազմենք է վարում Բարկուշատի բէկերի դէմ, որտեղ շատ նեղում էին Թիւփարայի բնակիչներին: Մի անգամ էլ գանուելով Շուշի բերդում, ճաշկերոյթի ժամանակ մելիք Թարամը ընդհարութիւն է ունենում Մելիք-Շահնազարի հետ և նրան կառաւ է անուանում, ակնարկելով այն, թէ նա իւր աղջիկը տուել է Փանահ-խանին կնութեան և իւր գոյութիւնը նրանով պահպանում: Անըն լսելով այդ մասին՝ մեծ տուգանքի է ենթարկելու մելիք Թարամին: Մը անուամբ կոչվում է և այժմ այն մելիքական առնմը, որ բնակւում է Տանձթափակամ Ղարաբարս դիւրում: Այս տոհմից նշանաւոր է նաև իւր քաջութեամբ մելիք Թարամի թոռ մելիք Հայրումը:

1) Մելիք-Գրանգիւլին շատերը Պան-Գրանգիւլ են կոչում:

2) Կրաքանչիւք բէալը որժ 85 է.

Այդպէս յանդուզն խօսում ես, որպէսզի ես քեզ սպանեմ, սակայն քո հայրը քեզ բնձ կին է տուել, պէտք է ապրես, եթէ սրապ թուրք լինի՞ կինս ես, եթէ ոչ՝ գերիս:

Սիրուն նանը ոպատախանում է, թէ դու էլ որ ուզննաս, որ ես թուրք գտանամ, հայի զիւղում չես պահիլ ինձ, որ առաւտ երեկո կաշնակի ժայնը լսեմ:

Խանը մատծում է, որ իրաւացի է Սիրուն նանի ասածը, բարձրանում է Կարմիր վանքի մօտ վրոն խփում, բնակւում, յետոյ էլ վանքը բանգում և նրա սրբատաշ քարերով իւր համար ապարանք պատրաստում: Սակայն Սիրուն-նանը այդ ասելով ցանկացել էր միայն Ֆաթալի-խանին հանել Արծուանիկ զիւղից, որպէսզի հայ զիւղացիներին շատ նեղութիւն չտայ:

Թորոս-իշխանի մահուան լուրը երի համուռմ է Դաւիթ-ը-րէկին, սա հրամայում է Մխիթար սպարապետին և Պալի զօրավարին, որ զնան յարձակուեն Ֆաթալի-խանի վրայ և Թորոս-իշխանի արեան վրէջը լուծենի: Սրանք մօտենում են Կարմիր վանքին և այսողեղ գանելով Ֆաթալի-խանի բազմաթիւ հօտերն ու նախիրները, թշում են դէպի Հալիճնոր, սակայն Ֆաթալի-խանը ընկնում է նրանց հեակից և Խոտանան զիւղի մօտ կառի բռնւում: Պալի զօրավարը քաջութեամբ կռւում է և վզի վերայ սրի մի հարուած ընկունելով՝ ձիուց վայր զըրուամ: Ստեփան-իշխանն էլ գերի է ընկնում: Մխիթարը փաքրամթիւ զնոտով վերազառնում է Հալիճնոր: Դաւիթը սաստիկ բարձանում է որա վրայ և կամենում է գլխատուի տալ նրան, որովհետեւ նա իրենից նեղացած լինելով անսիրու է պատերազմնը, սակայն միւս իշխանները միշնորդում են և փոխել տալիս որոշումը: Բայց և այնպէս՝ Դաւիթը հրամայում է մի լաւ թակել Մխիթար-սպարապետին:

Պալի զօրավարը կռւուի զաշուում աստացած վէրքից չի մեռնում, այլ երբ տեսնում է, որ զիշերը բոլորը հեռացան, հանում է թաշկինակը՝ կապում վզին, որ երկու մատ խորութեամբ կը-արուած էր և երկու ձեռքով զլուխը բռնած՝ զալիս համուռմ է Հալիճնոր երեք օրից յետոյ <sup>1)</sup>: Բոլորը սաստիկ ուրախանում են և խնամք տանելով քժշկում: Սակայն կտրուած տեղում փուշ մնում, ուր փոշին նստելով նեղութիւն էր պատճառում: ուստի և յաճախ Պալին, երբ եկեղեցու մօտ կամ շինամիջում նստած զրոյց

<sup>1)</sup> Պալի զօրավարին Հալիճնոր է բերում Խնժիվար զիւղացի Ռուսաստ-ը-րէկին, որ թէոքէտ թուրքերի հետ էր միացած, սակայն Պալի զօրավարից երբեմն բարիք ստացած լինելով երախառա-հաճախ է լինուում:

էր անում, կանչում էր երեխաներին, որ հաւի վետուրներով մաքրեն այդ կտրուած տեղի վոշին:

Ստեփաննոս-իշխանը գերի տարուելով Բարկուշատ մի թուրքի միջոցով ազատում է և ծպատուած, վեց հոգով գալիս Արծուանիկ, իշխան մի գիւղացու տուն: Միքանի գիւղացիներ իմանում են նրա ով լինելը, հաւաքընում են մօտը և մի լու հիւրասիրում: Ստեփան-իշխանը հարցնում է թէ ուր է Մելիք-Ֆրանգիւլը, առում են Կարմիր վանքումն է, խանի մօտ: Յետոյ հարցնում է թէ արս երեկոյ վերադաշտարժ է, պատասխանում են, թէ այս Յետոյ գուրս է գալիս գիւղից և բարձրանում զէպի Կարմիր վանքը, և նստում այն ծառի տակ, որ հէնց հիմայ էլ միայնակ կանգնած է ճանապարհի կողքին: Երախտազէս ժողովուրդը խնամքով պահպանում է գրան, որ իւր հովանու տակ հանգիստ է տուել Ստեփան-իշխանին:

Միքի յետոյ Մելիք-Ֆրանգիւլը ջորին նստած իջնում է վանքից: Ստեփան-իշխանը արձակում է հրացանը և սպանում դաւաճան մելիքին: Ջորին խրանում է և փախչում, բաւական տեղ քաշ տալով վայր ընկած մելիքին, որի ոտը մեացել էր ասպանդակի մէջ: Յետոյ Ստեփան-իշխանը հրամայում է իւր ծառաներին, որ քաշ տան ձգմն մելիքի մարմինը ներքին ձորը և զնան ասեն գիւղացիներին, թէ եկէք տարէք ձեր մելիքին, ձեր զատաստանը անէ: Միւնոյն ժամանակ Ստեփան-իշխանի ծառաները ըսնել էին Մելիք-Ֆրանգիւլին հետեւող գորին, պարկեցրել, զլուխը զրել մի քարի վրայ և մի անազին քար ձգելով վերան ջախջախել էին:

Նոյն գիշերը Մելիք-Ֆրանգիւլի Ռուստամ որդին տեսնելով որ հայրը չի վերադասում ասում է մօրը, «Դիւղացիներից մինն ասաց, թէ այսօրուայ եկողը Ստեփան-իշխանն է, մի գուցէ նա եկած լինի հօրս սպանելու, նա առանց նպատակի չէր գայ այստեղ: Մայրը պատախանում է, թէ ինչ լու արած կը լինի, այս ինչ է նրա տրածը: Այս խօսքի վրայ տեսնում են, որ ջորին միայնակ վերադարձաւ: Առաւտեան վաղ գիւղացիները զնում որոնում են Մելիք-Ֆրանգիւլի մարմինը և զանում քրիում են գիւղ: Սրա ազգականներից մի քանիսը կամենում են հայոց գերեզմանատանը թաղել հայկական ծիսականարութեամբ, պատճառաբանելով թէ նա ծածուկ քրիստոնեայ է մատցել, խնձորի մէջ գրած որբութիւն է առել, սակայն նրա աւագ որդի Ռուստամը ընդդիմադրում է ասելով, թէ ուրտ է, նա կատարելապէս ուրացել է հայի հաւատը, մօրս մի ամսից աւելի բանտարկել է, որպէսզի ստիպի ուրացութեան, եզրօրս կորստեան պատճառ է եղել,

իմ մաս էլ միշտ եասադուլ էր գնում, որ հակէ վերաս երեսս դէպի հարաւ գարձրած ազօթեմ, չէ, նայ քրիստոնեայ չէ մնացել, նու խաչուած վերեզմանի արժանի չէ, Շևոտի և նրան թագումնեն ընդհանուր վերեզմանատնից ½ վերսա հեռու, ճանապարհի կողքին, եւ այսուհետեւ մինչև այժմ ամէն մի անցորդ մօտենաւմ է այդ անարդ շիրմին և թքում վերան.

Մի առ ժամանակից յետոյ մելիք Թարամը գալիս է Արծուանիկ զիւղը և կամենում է հանել Սելիք-Ձբանդիւլի սոկորները և շների ասաջը ձկել, ստկայն զիւղացիներն ատում են, թէ վերեզմանատնից հնառ ենք զուել, մէկ էլ շան հոտը վեր մի հանիր:

Ստեփան-իշխանը Սելիք-Ձբանդիւլն սպանելուց յետոյ վերադառնում է Հայինը, ուր շատ սիրով ընդունում է Դաւիթ-րէկից, Կարճ միջոցից գուման է հասնում, թէ Օրուերազի կողմից թուրքերը ահազին խորով յարձակուել են Կայերեցի Պապ Պօրփառի վրայ և առ փոխանակ կոռւելու, Նրանց բազմութիւնից վախեցած՝ փախել է, Դաւիթ-րէկն խսկայն Ստեփան-իշխանի հնառ բաւական մեծ զօրբով զնում է Տաշտօն, մինչև ուր եկել հասել էին թուրքերի հրոսակախմբերը: Սրանց լաւով Դաւիթ-րէկի գալը անկանոն կերպով փախչում են այս ու այն կողմէ Դաւիթն այստեղ սպասում է, որ Պապ Պօրփառը զայ իւր մօտ, ստկայն առ չի համարձակուում ներկայանալու, և մոռում է Կալեր զիւղում: Դաւիթն ինքն է զալիս Կալեր, հրամայում բռնել Պապին և զըլիստել, որ փոխանակ քաջարար կոռւելու, և նոյն իսկ մենանելու, կանացիարար փախել էր և պլուխն ազատել, Ապա Պապի փոխարէն կարգում է Ստեփան-իշխանին և ինքը վերապահնում Հայինը:

Մի առ ժամանակից յետոյ Դաւիթ-րէկը Հայինը ուր հիւանդանում է և մեռնում, ընդամենը ինն տարի երկիրը կառավարելուց յետոյ Նրա մահը շատ մեծ միշտ է պատճառում բոլոր Պարարացիներին: Տաթեսի վանդից Յովակիմ ծերունի եպիսկոպոսը, որ ժողովրդից պատ էր կոչւում, զալիս է և մեծ հանգիսով թաղում է Դաւիթ-րէկին Հայինը երկեցներ կողեցեցու գաւթում: Դերեզմանաքարի վրայ էլ միմիայն մի ծաղիկ են քանզակում, և այդ երեսն էլ հողի մէջ թաղում, որպէսզի առագային թուրքերը չկարողանան ճանաչել և ոսկորները հանել:

Դաւիթ-րէկի մահից յետոյ իշխաններն ու Տաթեսի եպիսկոպոսները հաւաքուում են Հայինը խորհրդի, և Միքիթար սպարապետին ընտրում Դաւիթին յաջորդ, որովհետեւ վերջինս չէր ամուսնացել և ժառանգ չունել: Հայինը որպէս Եղին, նա, որ Ստեփան-իշխանի կեղծած նամակը տարել էր վրաց Քաղաքաւորին և Դաւիթ-րէկին առաջնորդել էր վերապահնալու Ղարաբաղ, շատ աշխատում

է ինքն ընտրուել, և երբ չի կարողանում յաջողացնել, սաստիկ ոխակալում է, և որոշում է վրէժ լուծել։ Այս նպատակով մարդիկ է ուղարկում Ֆաթալի-խանի մօս և համազում նրան յարձակուելու Հալիճորի վրայ, խոսանակով ամէն կերպ օգնել նրան։ Ֆաթալի-խանն էլ փորձով զիտենալով, որ երբ գողը տանիցն է, եղը հերթիկից կարելի է հանել, միանում է Չալար-եանլուսի խանի հետ և յարձակում Հալիճորի վրայ։ Եղին անմիջապէս միանում է թուրքերի հետ, պաշտում թիրգը և կորել անլիւ թիրդի միակ աղբիւրի գաղտնի պահուած ակը։ Միիթար-սպարապետը տեսնելով, որ Եղին է թուրքերին առաջնորդում, «Կ» որ ազրիւրի ակը արգէն կտրուած է, և ժողովուրդը յուսահատութեան մէջ է ընկել, ծածուկ փախչում է Խնձորեսկ։ Ժողովուրդը իմանալով սրա փախուստը՝ պատարագ է մատուցանել տալիս, հաղորդում և անձնատուր լինում։ Թուրքերը սիրում են բերդին, շատ շատերին կոտորում և Միիթարի երկու որդոցն էլ գերում։ Սակայն կարճ միջոցից Միիթարը 1500 մարդ վարձելով օգնութեան է համում, թուրքերից շատ շատերին ջարդում, Չալար-եանլուսի խանին սպանում և իւր որդիներին էլ գերութիւնից ազատում։ Եղին փախչում է Շնոտէն գիւղը, սակայն ձանապարհին Միիթարի զինուորները բռնում են նրան բերում Հալիճոր։ Ժողովուրդը թափում է սրա վրայ և ասելով թէ-զու սուրբ մարդ ես, պէտքէ քո առաջդ մոմ վասնեք, մերկացնում են, և ուսերին, կրծքին, ուներին մոմեր կպցնում ու վառում սատկեցնում նրան 1)։

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ Միիթարն սպասում էր, որ իրեն կընազանդին հայերը և կը յարգեն ինչպէս յարգում էին Դաւիթ-բէկին, սակայն տեսնելով որ հալիճորցիներն իրեն չեն լուսմ, թողնում հեռանում է Խնձորեսկ գիւղը։ Սակայն այստեղ ևս ժողովուրդը սիրով չի ընդունում նրան, որովհետև պէտքէ պաշտպանէր նրան պարսից հալածանեցից։ Պարսիկները շարունակ հետեւում էին նրան, նոյն իսկ Պարսից շահը մեծ զումար է խոսանում այն մարդին, որ կը ներկայացնէր իրեն Միիթարի զըլուխը։

Եւ յիբաւի, հէնց որ Միիթարը գալիս է Խնձորեսկ, Պարսից մի զունա հետեւում է նրան և պաշտում է այս գիւղը։ Դիւզացիներն ապաստանում են քարատակերում, որ քերծի մէջ շինուած փոքրիկ սենեակներ են, նախկին, անապահով ժամանակների բնակարաններ։ Այս քարատակների մէջ բարձրանալու կամ այդտեղից իշնելու համար հաստ թուկեր էին կազում մէջքին, և կա-

1) Միիթ հիմոյ է այս կոչմեջում մարեկներին եղի ձն անօսութիւն

մաց կամաց վեր էին քաշում կամ ներքեւ թողնում: Ահա այս քարտակերի մէջ ամբացած Մխիթար-սպարապետը՝ զիւղացիների հետ կուռում է թուրքերի դէմ: Մի վնդակ զիւղում է Սէյրանանց Մարգարիտի որդու կրծքին, որ հրացանը ձեռին կուռում էր թըշ-նամու դէմ: Խեղճը վայր է զորում, սակայն նրա արի մայր Մարգարիտը վերցնում է նրա հրացանը և ինքն է շարունակում արձակիլ: 'Ի վերջոյ Մխիթարը յաղթում է պարսիկներին և զուրս քշում Խնձորեսկից:

Սակայն վեց անգիտան հայեր զրաւուած Մխիթարի զիւի համար խոստացում վարձատրութիւնից, զաւազրութիւն են կազմում, սպանում Մխիթարին և զլուխը կարում, տանում ձառուցանում են շահին: Սակայն սա տեսնելով այդ վիթխարի, զեղեցիկ զլուխը՝ զայրանում է սրանց վերայ, թէ Բնչակէս համարձակուեցան ձեռք բարձրացնել մի այսպիսի քաջ մարդու վրայ և փոխանակ խոստացած զիւագինը տալու, հրամայում է բոլորին էլ զիւստել: Ալա Մխիթարի զլուխը յետ է ուղարկում Խնձորեսկ, որ մարմնի հետ միասին պատռով թաղեն:

Նրա անջւռք վերեզմանն այժմ էլ զանուում է զիւդի հարաւարնելեան կողմում զանուած տեհրուկ անապատում, եկեղեցու հիւսիսային կողմում և կրում է հետևեալ տապանագիրը.

*Այս է տապան ի հանգստեան.*

Իրեալ մարմնով ի գերեզման,  
Սայ Մխիթար մեծ անուանեալ,  
Սորա օնէր իշխանութիւն,  
Սա քեմուրաստ զնաց ջիվան,  
Որ է երկրէն սայ կեաննուվ էր  
Նահատակուեցաւ Ռէշմէթ.

Մխիթարի մահից յետոյ Հայինորի պաշտպանութիւնը իրենց վրայ վերցրին Մելիք Փարսադանի թռո. (Սաֆրազի որդի) Այվազ-բէկը և Ստեփան-իշխանի որդի մելիք Ղուկասը:

Սրանց ժամանակ օսմանցիները միանալով Դիւղալուի<sup>1)</sup> խանի և այլ պարսիկների հետ յարձակւում են Հայինորի վրայ, որպէսզի Դաւիթ-բէկի երկրները տիրապետեն: Մելիք-Ղուկասն ու Այվազ-բէկը տեսնելով որ սրանց զօրքը չափազանց շատ է, մարդիկ են ուղարկում շրջակայ Քաջարանց, Փուխրուս, Փիր-Մազրա, Քրդիկանց ու Հանդ զիւղերը և հրամակում բնակիչներին իրենց հետ միանալու և յետ մղելու թշնամիներին: Արանք էլ 'ի

<sup>1)</sup> Կարճեւան զիւղի հանգէտ, Երազով ոչ սփին, մի շաղաք էր, Քիւրդաս բաղաջի ժամ:

նկատ առնելով, որ իրենք էլ թուրքերին աւար են դառնալու, լաւ մն համարում ընդունել հրաւերը և բոլորը, կին, աղայ, աղջիկ զինուելով ինչով կարգանում են, նոյն իսկ բանով ու կացնով, գալիս խմբում են Գեօլճուկի գաշտը, կայեր գիւղի գլուխը, Այստեղ տեղի է ունենում մի արինահեղ կոփի, հայերը յաղթում են և քշում մահմեղականներին մինչև Խանագեանի գաշտը, որ գուշնում է Վարդանաձորի մօտ և այսուեզ Ալիկարու խան Միրզա Սայիլին պահում, իսկ մեացաներին փախցնում։ Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ երկրի մէջ մի առ ժամանակ խազագութիւն է ընկնում և Մելիք-Ղուկասն ու Այգաղ-բէկը խազագութիւնը կառավարում են հայ ժողովրդին, որը շարունակում է ամէն կերպ աշխատել կամ կոտորել և կամ երկրից հեռացնել թուրքերին։

Հետաքրքրական և շատ բնորոշ է Կարճեանցի Բարայի պատմութիւնը, որի փառաւոր թաղումը կատարել են մեր այս Մելիք Ղուկասն ու Այգաղ-բէկը։

Բարան Կարճուանում տանուաւէր է եղել։ Սա տեսնելով որ իրենց գիւղի նախրապան թուրքը բազմացել, չորս տառ է կազմել, վախեցել է թէ մի գուցէ սրանք էլ արագութեամբ բազմանալով՝ թուրքաստան գարձնեն Կարճուան գիւղն էլ, մի քանի անգամ պահանջել է, որ գաղթեն զիւղից, սակայն նրանք չեն համաձայնել։ Այս պատճառով տանուաւէր Բարան որոշել է ուրիշ միջոցի զիմել։ Նա պատուիրել է գիւղացիներին որ մեծ քանակութեամբ ցախ բերեն և զարսին իւր տան մօտ երբ ցախը բերում է, մի աշխանային գիշեր, երբ բոլոր թուրքերն իրենց աներում քնած են եղել, առնուաւէր Բարան ցախը լցնել է տուել զրանց աների վերայ և կրակ տուել, աներն էլ, նրանց էլ վառել, մոխիր գարձրել։ Հետանեալ առաւօսն էլ հրամայել է, որ զրանց տան տեղերն էլ վարեն, պարտէղ գարձնեն։ Գարնանը սրանց բարեկամ թուրքերը զալիս են սրանց տեսութեան։ Նայում տեսնում են, որ սրանց աների տեղում պարտէղ է ձգած։ Հարց ու փորձ են անում, սրանց առում են, թէ զաղթել են։ Սակայն սրանք մի կերպ իմանում են եղելութիւնը և գնում գանդատառում Դիւզալուի խանին։ Սա անմիջապէս կանչում է Բարային և այս մասին հարց ու փորձ անում, Բարան ուրանում է արածը, բայց Մանլէվ գիւղացի Խոճա-Սարգիսը մատում է, թէ յիրաւի, նա վառել է թուրքերին։ Խանը անմիջապէս երկու պայման է գնում՝ կամ թուրքանալ կամ զրկուիլ զլիից։ Տանուաւէր Բարան ընդունում է առաջմանը և թուրքանում։ Սակայն խանը չհաւասարով նրա անկեղծութեան, երկու տարի պահում է նրան իւր մօտ։ Սա էլ այնպիսի հաւատարմութեամբ և եռանդով է ծառայում խանին, որ վերջինս երկու

անզամ՝ պատվամաւոր է ուղարկում նրան շահի մօս Վերջապէս խանը կամնալով վարձատրել նրան՝ հաւատարիմ ծառայութեան համար՝ Մեզրու և նրա ըրջակայքի վրայ մինպաշի է կարգում. Մի առ ժամանակից յետոյ Բարան գայիս է լէնվադ բռնում այդտեղի տաճն և երկու պարսիկ իշխաններին և մեզազրելով նրանց իր թէ կամնաւմ են զաւահանել պարսիկներին և անցնել սամանցիների կողմէ՝ բոլորին կախել է տալիս, զիւզը կրակում, և տաւարն ու գրչքը ուղարկում խանին:

Այս անցքից երկու տարի յետոյ էլ Բարան զնում է Թաղամիր թրքարնակ գիւղը, և որտեղ ևս մեզազրելով դաւահանութեան մէջ, այրում և տաւարն ու գոյքը ուղարկում խանին. Մի տարուց յետոյ էլ զնում է Մանլէզի, բռնում Խոճա-Սարգսին, որ իրեն մատնել էր, և զիխատել է տալիս Նա կամնաւմ էր նրա սերունդն էլ սրից անցկացնել, սակայն նրա կինը սրա ուսներն ընկած սաստիկ պատառում է, և այսպիսով պատառմ սերունդը կոտորածից:

Կեսնիքի վերջին օրերում Բարան վերապանում է Կարճնան, խոստվանում քահանային, թէ թէպէս ընդունել է մահմեդականութիւն, սակայն որով հայ քրիստոնեայ է մնացել. ապա պատարագ է մատուցանել տալիս և հազարզում, Մի շարաթից յետոյ զգալով մահուան մօտենալը, կրկին պատարագ է մատուցանել տալիս, կրկին հազարզում և խնդրելով իրեն թագել քրիստոնէական ծէսով մեանում, Հայերն երկիւղ կրկելով իսանից, չնա համարձակում կատարել ննջեցեալի վերջին խնդիրն, ուստի և այդ մասին իմացնում են խանին, միանզամայն մարզինը տանելով եկեղեցի. Խանը գալիս է Կարճուան, տեսնում զիակը և ասում թէ ինչ էք ձեռքերը խաչել և գէպի արևելք դրել, առ մահմեդական է. Յետոյ ուղում է ձեռքերը և գէպի հարաւ զնում. Հետեւել տուուս տեսնում են, որ ձեռքերը կրկին խաչուել են և ինքը կրկին զէպի արևելք է զարձած. Խանը սասատիկ բարկանում է, կարծելով թէ հայերն են արել, և երբ որտեղ սկսում են արդարանալ, նա կրկին ուղում է նրա ձեռքերը, փոխում զիրքը զէպի հարաւ, և եկեղեցու զուում ու պահպաններ զնում. Առաւտեան խանը անձամբ զալիս է բաց անում կնքուած զուու, տեսնում զիակը զարձաւալ գէպի արևելք զարձած և ձեռքերը կրծքի վրայ խաչուած, ասում է. Սա միայն երեսանց է թուրք եղել, իսկ որտանց հայ. տարէք, թաղեցէք ձեր ծէսով, միայն այսուհետեւ որտեղ այլիս մի կոչէք Բարա քեատուահ. (տանուտէր) այլ Բարա-զազլու (այրող). Փողովուրզը ուրախացած հրափրում է Մելիք-Ղուկասին և Այվաղ-բէկին և որտեղ ներկայութեամբ մինչ հանգիսով թաղում նրան,

Մի առ ժամանակից յետոյ Պարսից Նադիր շահը եկել է Գէազանու գաշտը (Երասիի ափին): Մելիք Նուկասը, Այգաղ-բէկը, մելիք-Թարամը իրենց գօրքերով ընդառաջ են գնացել նրան: Նահը որանց շամ լու է ընդունել, և վերանաստատել իրենց երկրների վրայ, ճանաչելով նրանց մելիքական իրաւունքները: Ապա շահը անցել է Մուղանու գաշտը, ուր գնացել է նաև Հայոց Արրանամ կաթուղիկոսը: Երեք ամիս այստեղ մնալուց յետոյ երբ Նազիր-շահը վերապատում է, վերոյիշեալ մելիքները կրկին ընդառաջ են գնում նրան և խնդրում են զալ իրենց մօտ հիւրասիրուելու: Շահն ընդունում է որանց հրաւերը; Պալիս բանակում Ռւզուր գաշտում, այստեղ, ուր այժմ գանձում են ու: Մելիք-Ազարեանի պղինձ հաւելու գործարանը: Ամրող զիշերն ուրախութիւն են անում, հրացան; հրթիր (Փշանի) արձակում: Մի խեղճ մարդ էլ ծառի վրայ դարստած խոտն է վասում: Առաւոտեան շահը կանչում է այդ բարդաւերճեցի հային և հարցնում, թէ ինչի՞ խոտը վառեց: Սա էլ պատասխանում է: Ենու աղքատ մարդ եմ, աչ հրացան, ոչ էլ հրթիր ունէի, որոնցով կարողանայի իմ ուրախութիւնս արտայայտել, իմ ունեցած չունեցածս մի քանի խուրձ խոտն էր, որ շահին մատագ արի: Շահին շատ դիւր է զալիս սրա այս պատճառարանութիւնը, ուստի և հրամայում է մի լու խալաթ տալ:

Շահը մնում է այս գաշտում երեք օր շարունակ և յաճախ ձի նստած զրօնում է շրջակայքում: Այս գաշտը նրան շատ դիւր է գալիս և նա որոշում է այստեղ մի բաղաք հիմնել, եւ երբ վերապատում է՝ 400 պարսիկ ընտանիքներ մի քուրդ սուլթանի (իշխանի) առաջնորդութեամբ ուղարկում է այստեղ քաղաք հիմնելու:

Քուրդ սուլթանը հրաւերում է իւր մօտ հայ մելիքներին և խնդրում, որ իրեն օգնեն շահի հրամանը կատարելու: Հիմնելու Ռւզուր քաղաքը,

Մելիքներից միայն մինչ՝ մելիք-Ղուկասը չի գնում նրա մօտ, մտածելով, որ Դաւիթ-բէկն այնքան աշխատեց թուրքերին հնացնելու մեր երկրից, հիմա զա եկել է և կամննում է այստեղերը թուրքանոց դարձնել: Ենոյ տեսնելով, որ առանց իւր ձեռնուութեան էլ քաղաքի շինութիւնը արագութեամբ առաջ է գնում, երեսուն կտրիներով ամրանում է այդ քաղաքի մօտ բարձրացող Ղըռ-զալայի բերդում և այստեղից զիշերները յարձակւում Ռւզուր քաղաքի վրայ, աւերում, կողոպտում և կրկին ապաստանում բերդում: Քուրդ սուլթանն ամեն միջոց գործ է գնում նրան բռնելու, բայց չի կարողանում յաջողացնել: Վերջապէս երկու տարուց յետոյ դիմում է մելիք Այգաղի և մելիք Թարամի միջնորդութեան

և սրանց հետ միասին զնում է Ղըողալայի բերդի գումար, երգումն տալիս, որ մելիք Ղուկասին ոչ մի վեաս չի հասուցանիլ, և նախեկին ասարիներից մասցած հարկերն եւ չի պահանջիլ, միայն թէ նու անցնի գնա էտնանուու թուրք վիճակի Առաջաձոր գիւղը և այնուեղ հանգիստ ապրի, կառավարելով այդ վիճակը:

Մելիք-Ղուկասն ընդունում է նրա պայմանը, զուրս է զալիս Ղըողալից և զնում Առաջաձոր, միայն իւր երկուուն կորիներին թողնում է բերգում, որ յամենայն գէպս պատրաստ մնան:

Հազիւ անցնում է երեք օր, մելիք Ղուկասի որդի մելիք Յովհանն ու մելիք Ռականը զիշերը նկատում են, որ երկու թուրք են եկել մոտել իրենց առնը Խսկոյն վրայ են համուում, բռնում նրանց, կազիկապում և ձգում մի սենեակի: Մելիք Ղուկասը հարց ու փորձ է անում սրանց և յաջողացնում է խոստովանեցնել, որ ուղարկուած էին քուրդ սուլթանից իրեն, մելիք Ղուկասին, սպանելու:

Այս բանի վրայ մելիք Ղուկասը սասափիկ զայրանում է և իւր բառն և չորս գիւղերից հինգ հարիւր հոգի հաւաքում ու յարձակում թւղուր քաղաքի վրայ, քուրդ սուլթանին իւր կոոչ և որդիների հետ գերի բռնում, քաղաքը կողոպատում, քանդում և կրակ տալիս:

Երբ քուրդ սուլթանին բնուում են մելիք Ղուկասի առաջը, մելիքին ասում է. «Ճեսամբ»:

—Ճեսայ, պատասխանում է քուրդ սուլթանը, իմ սուստ երդամանս հաւաքումն է այս:

Սրա վրայ մելիք Յովհանն բարկանում է, թէ գեռ խօսացնում էլ ես այդ շանը, և որի հարուածով կոտորում քուրդ սուլթանին, կնոջը և երեխաներին: Այսպիսով քանդում, անբռնում է այդ նորաշէն քաղաքը:

Սպասելի էր, որ Նազիր շահը զօրք ուղարկէր և պատժէր մելիք Ղուկասին, սակայն նա սպանում է և Պարսկաստանում յառաջացած խոռութիւնները մոռացնել են առջիս այս գէպքերը:

Մելիք Ղուկասից յետոյ Հայիմորում մելիքութիւն է անում մելիք Բակու որդի մելիք Փարսագան Գ.՝ը:

Սրա ժամանակ Զանգուրի Արիւրատ խանը կամենում է Բեիս զիւղի այժմեան հանգստարանի Շիներին-հարթ բարձրութեան վրայ մի բերդ կառուցանել, սակայն Մելիք-Փարսագան Գ. արգելում է ասելով. «Եթէ կարող ես մարդկանց զիակներով պարիսպ քաշել, փորձիր շինել, թէ չէ քարոզ ու կրով թոյլ չեմ տալ շինելու»:

Խանը վախենում է նրանից և չէ իրագործում իւր մտադրութիւնը:

Այս միևնոյն ժամանակներում Շուշու Իրբահիմ-խանի սարվազները զալիս են Բաղաւուրծ գիւղը և բռնութեամբ տանում են Թումանենց աղջիկը՝ խանի նարեմի համար:

Մելիք Փարսապանը այս որ լսում է՝ անմիջապէս յարձակում է այդ սարվազների վրայ և Բաղաւուրծ գիւղից ներքն, Ռւզուր գետի ափին, Սուլթան բայի մօտ սովանում երեք սարվազներին և խումբ Թումանենց աղջկան, ասելով որ բանի բնագը կենդանի է, թող ոչ մի խան չնամարձակուի իւր հպատակներից մինին տանելու Երբ լուրը համարում է Իրբահիմ խանին, ուս անմիջապէս հրամայում է պատրաստութիւն տեսնել՝ Մելիք-Փարսապանի վրայ արշաւելու Սակայն նրա մոտերիմները խորհուրդ են տուիս, որ այդպիսի վտանգաւոր քայլ չանի, քանի որ սրա երկիրը սաստիկ լեռնուում է և անմատչելի, զօրքը իզուր կը կոտորուի:

Միևնոյն ժամանակ Մելիք-Փարսապանի հպատակներն էլ լսելով որ Իրբահիմ խանն արշաւելու է իրանց վրայ, տան մարդն ընտրում և Տաթեի առաջնորդի հետ ուղարկում Իրբահիմ-խանի մօտ, որպէս զի միջնորդն և մելիքի հետ հաշտեցնեն, ոյլ ևս իզուր արին շբափուի:

Եւ որպէսն Պարսից մէջ սովորութիւն է, որ արեան վրէժը չեն լուծում երբ մարդասպանը գնայ սպանուածի տիրոջ գուոց, ուստի և Իրբահիմ-խանը պահանջում է, որ Մելիք-Փարսապան Գ. գայ իրեն մօտ որպէսզի այսպիսով լուծուած համարուի նրա սպանուած երեք սարվազների արեան վրէժը Միևնոյն ժամանակ ինքն էլ կրկին ու կրկին երդուում է, որ ոչ մի վնաս չի հասուցնի մելիքին: Այս ինքնակոչ միջնորդները վերադառնում են Մելիք-Փարսապան Գ.-ի մօտ և մինքան թախանձում վերջինիս, որ սա, հակառակ իւր ցանկութեան, վեր է կենում գնում Իրբահիմ-խանի մօտ: Սակայն վերջինս արհամարեւով իւր տուած խօսառումներն ու երգումը՝ կուրացնել է տալիս Փարսապան Գ.-ին, խումբ է նրանից նրա բոլոր գիւղերը, բացի Հալիճորից ու Բեիից, և արձակում:

Մելիք-Փարսապան Գ. վերադառնում է Հալիճոր, հրաժարում է մելիքութիւնից, նշանակելով մելիք իւր որդի Օվանէսին և ապա առանձնանում է Բեիում, ուր բաւական երկար ապրում է:

Մելիք-Օվանէսի ժամանակ Ղափանն էլ ընկնում է Ռուսաց տիրապետութեան ներքոյ և սա, ինչպէս և սրա որդի մելիք Գարւուսը կառավարում են իրենց ժողովրդներին իրեն ուսւաց պաշտօնեայ: